



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 32-Ա

19 ՄԱՅԻՍԻ 2021թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 4
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը նիստի օրակարգը հաստատելու մասին, Կապան համայնքի ավագանին *որոշում է.*

Հաստատել Կապան համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 19-ի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին

2. Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից հայտարարված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համաձայնություն տալու մասին

3. Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման լրացուցիչ ֆինանսավորում ծրագրի բաղադրիչ երկուսին Կապան համայնքի մասնակցությանը հավանություն տալու և նախաձեռնող խմբի կազմը հաստատելու մասին

4. Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման լրացուցիչ ֆինանսավորում ծրագրի բաղադրիչ երկուսի մասնակցության աշխատանքային խմբի կազմը հաստատելու մասին

5. Կապան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 127-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

6. Կապան համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վարձակալության և հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերից ծագած պարտավորությունները ներելու մասին

8. Արշակ Գազիկի Բաղդասարյանին փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն տրամադրելու մասին

9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող Կապան քաղաքի Գ. Նժդեհի հրապարակ, թիվ 1/3 հասցեում գտնվող հողամասի կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգելու մասին

10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող Կապան քաղաքի Գ. Նժդեհի հրապարակ, թիվ 1/4 հասցեում գտնվող հողամասի կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգելու մասին

11. Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 17-ի N 30-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Շիկահող բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվություն) Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին

13. Կապան համայնք, գյուղ Աճանան 2-րդ փողոց, թիվ 74 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին

14. Կապան համայնքի վարչական տարածքում, Եղեգ գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալության իրավունքով մրցույթով օգտագործման տրամադրելու մասին

15. Կապան համայնքի վարչական տարածքում Աճանան գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով մրցույթով օգտագործման տրամադրելու մասին

16. Կապան համայնքի վարչական սահմաններում գտնվող, որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

17. Համայնքի Կապան քաղաքի Բաղարուրջ թաղամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով մրցույթով օգտագործման տրամադրելու



Կողմ (9)

 ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
 ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
 ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
 ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
 ՄԿՐՏՅԱՆ ԱՐԱ
 ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ



ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 33-Ա

19 ՄԱՅԻՄԻ 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին *որոշում է*.

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի բյուջեի 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքի մասին հաղորդումը՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-2 հավելվածների:

Կողմ (9)

ԱՍՐՅԱՆ ՎԱՋԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան



Հավելված 1

Կապան համայնքի ավագանու

„ 19 „ մայիսի 2021թ. թիվ 33-Վ որոշման



Հաշվետվություն

Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ

(02/01/21 - 31/03/21թ. ժամանակահատվածի համար)

Տողի	Նկարագրություն	Հոդ աճի համա ր	Տարեկան ճշտված պլան				Առաջին եռամսյակի ճշտված պլան				Փաստացի				միջորոնդմ մոսիստ դորմստուհ	դոհիռմոյ մոսիստ դորմստուհ
			Ընդամենը	այդ թվում		Ֆոնդային մաս	Ընդամենը	այդ թվում		Ֆոնդային բյուջե	Ընդամենը	այդ թվում		Ֆոնդային բյուջե		
				(ս.5+ս.6)	վարչական մաս			(ս.8+ս.9)	վարչական բյուջե			(ս.11+ս.12)	վարչական բյուջե			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)		4 036 662,4	2 806 183,5	1 230 478,9	1 830 275,5	726 817,5	1 103 458,0	732 348,2	687 584,5	44 763,7	94,6	40,0			
1100	այդ թվում 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐԶԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1140 + տող 1150)	7100	329 291,0	329 291,0	X	102 903,5	102 903,5	X	95 103,7	95 103,7	X	92,4				
1110	այդ թվում 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112 + տող 1113)	7131	41 098,0	41 098,0	X	12 676,0	12 676,0	X	10 314,4	10 314,4	X	81,4				
1111	այդ թվում Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		21 718,0	21 718,0	X	6 868,0	6 868,0	X	6 386,2	6 386,2	X	93,0				
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		19 380,0	19 380,0	X	5 808,0	5 808,0	X	2 650,8	2 650,8	X	45,6				
1113	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ		0,0	0,0	X	0,0	0,0	X	1 277,4	1 277,4	X					
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	237 740,0	237 740,0	X	77 615,0	77 615,0	X	63 604,1	63 604,1	X	81,9				
1121	այդ թվում Գույքահարկ փոխարդարախոջների համար		237 740,0	237 740,0	X	77 615,0	77 615,0	X	63 604,1	63 604,1	X	81,9				

1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311+տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317+ տող 11318 + տող 11319), այդ թվում՝	7145	39 453,0	39 453,0		X	9 862,5	9 862,5	X	17 772,6	17 772,6	X	180,2	180,2
11301	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար		1 380,0	1 380,0		X	345,0	345,0	X	135,0	135,0	X	39,1	39,1
11302	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար		120,0	120,0		X	30,0	30,0	X	12,0	12,0	X	40,0	40,0
11303	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		30,0	30,0		X	7,5	7,5	X	5,0	5,0	X	66,7	66,7
11304	Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրելուն. համայնքի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ակտումբիլ. ճանապարհի կողմերում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար		3 200,0	3 200,0		X	800,0	800,0	X	2 900,0	2 900,0	X	362,5	362,5

11305	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մակրաձախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար	900,0	900,0	X	225,0	225,0	X	720,0	720,0	X	320,0	320,0
11306	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում մակրաձախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար	825,0	825,0	X	206,0	206,0	X	675,0	675,0	X	327,7	327,7
11307	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար	21 688,0	21 688,0	X	5 422,0	5 422,0	X	6 930,9	6 930,9	X	127,8	127,8
11308	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում՝ առևտրի և ծառայությունների մատչելի, Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար	440,0	440,0	X	110,0	110,0	X	91,8	91,8	X	83,5	83,5
11309	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սնունդի, գվարձանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար	1 200,0	1 200,0	X	300,0	300,0	X	987,5	987,5	X	329,2	329,2
11310	Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սնունդի կազմակերպման և իրացման թույլտվության համար	4 000,0	4 000,0	X	1 000,0	1 000,0	X	1 802,4	1 802,4	X	180,2	180,2

11312	Ավագանու սահմանս. կարգին ու պայման-ին համ. համայնքի վարչ. տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվ. համար, բացառ. միջպետ. ու համարապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի օտարման շերտերում և պաշտպ. գոտի-ում տեղադ. գովազդ-րի թույլտվ-րի (բացառ. երևան քաղաքի)	3 000,0	3 000,0	3 000,0	X	750,0	750,0	750,0	X	1 723,0	1 723,0	1 723,0	X	229,7	229,7
11313	Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդակիշերը (գիմանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվ. համար	1 200,0	1 200,0	1 200,0	X	300,0	300,0	300,0	X	1 200,0	1 200,0	1 200,0	X	400,0	400,0
11318	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար	720,0	720,0	720,0	X	180,0	180,0	180,0	X	90,0	90,0	90,0	X	50,0	50,0
11319	Այլ տեղական տուրքեր	750,0	750,0	750,0	X	187,0	187,0	187,0	X	500,0	500,0	500,0	X	267,4	267,4
1140	1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1141 + տող 1142), այդ թվում՝	11 000,0	11 000,0	11 000,0	X	2 750,0	2 750,0	2 750,0	X	3 412,7	3 412,7	3 412,7	X	124,1	124,1
1141	Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գումարներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար	2 500,0	2 500,0	2 500,0	X	625,0	625,0	625,0	X	824,2	824,2	824,2	X	131,9	131,9

1142	Նոտար. գրասենյակների կողմից նոտար. ծառայություն. կատարելու, նոտար. կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար	8 500,0	8 500,0	X	2 125,0	2 125,0	X	2 588,5	2 588,5	X	121,8	121,8
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՍԱՇՆՈՐՋՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260)	7300	2 952 622,6	1 929 871,7	1 022 750,9	1 468 196,0	482 466,0	985 730,0	481 509,2	0,0	32,8	99,8
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256), որից՝	7331	1 929 871,7	1 929 871,7	X	482 466,0	482 466,0	X	481 509,2	X	99,8	99,8
1251	Պետական բյուջեից ֆինանսական համահարգեցման սկզբունքով տրամադրվող ռոտացիաներ		1 914 702,3	1 914 702,3	X	478 674,0	478 674,0	X	478 675,6	X	100,0	100,0
1255	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		15 169,4	15 169,4	X	3 792,0	3 792,0	X	2 833,6	X	74,7	74,7
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262)	7332	1 022 750,9	X	1 022 750,9	985 730,0	X	985 730,0	0,0	0,0	0,0	
1261	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		1 022 750,9	X	1 022 750,9	985 730,0	X	985 730,0	0,0	0,0	0,0	
1300	3. ԱՅԼ ԵՎԱՍՈՐՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370)	7400	754 748,8	547 020,8	207 728,0	259 176,0	141 448,0	117 728,0	155 735,3	44 763,7	60,1	78,5
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334)	7415	311 578,0	311 578,0	X	82 601,0	82 601,0	X	55 660,0	X	67,4	67,4

1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		100 500,0	100 500,0	X	25 125,0	25 125,0	X	18 272,0	18 272,0	X	72,7	72,7
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ		205 278,0	205 278,0	X	56 027,0	56 027,0	X	35 084,1	35 084,1	X	62,6	62,6
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		5 800,0	5 800,0	X	1 449,0	1 449,0	X	2 304,0	2 304,0	X	159,0	159,0
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343)	7421	7 473,3	7 473,3	X	1 866,0	1 866,0	X	1 494,7	1 494,7	X	80,1	80,1
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		7 473,3	7 473,3	X	1 866,0	1 866,0	X	1 494,7	1 494,7	X	80,1	80,1
1350	3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող 1353), այդ թվում՝	7422	192 469,5	192 469,5	X	48 108,0	48 108,0	X	44 505,8	44 505,8	X	92,5	92,5
1351	Տեղական վճարներ (տող13501+տող13502+տող13503+տող13504+տող13505+տող13506+տող13507+տող13508+տող13509+տող13		182 469,5	182 469,5	X	45 609,0	45 609,0	X	43 659,7	43 659,7	X	95,7	95,7
13503	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար		250,0	250,0	X	60,0	60,0	X	90,0	90,0	X	150,0	150,0
13505	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար		650,0	650,0	X	162,0	162,0	X	155,0	155,0	X	95,7	95,7
13507	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար		100 000,0	100 000,0	X	24 999,0	24 999,0	X	29 952,4	29 952,4	X	119,8	119,8

13513	Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար		63 740,0	63 740,0	X	15 933,0	15 933,0	X	10 674,5	10 674,5	X	67,0	67,0
13514	Համայնքային ենթակայության արտադրողական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն)		17 829,5	17 829,5	X	4 455,0	4 455,0	X	2 785,8	2 785,8	X	62,5	62,5
13518	Համայնքի արհիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար		0,0	0,0	X	0,0	0,0	X	2,0	2,0	X		
1352	Համայնքի կարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օդակայանացման		10 000,0	10 000,0	X	2 499,0	2 499,0	X	846,2	846,2	X	33,9	33,9
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362)	7431	5 000,0	5 000,0	X	1 250,0	1 250,0	X	1 458,1	1 458,1	X	116,6	116,6
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		5 000,0	5 000,0	X	1 250,0	1 250,0	X	1 458,1	1 458,1	X	116,6	116,6
1370	3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1371 + տող 1372)	7441	30 000,0	30 000,0	X	7 500,0	7 500,0	X	7 500,0	7 500,0	X	100,0	100,0
1372	Ֆիզ. անձ. և կազմ. նվիրաբեր-ից համայնքին, վերջ. ենթ. բյուջ. հիմն. տնօրինմ. անց. գույքի (հիմն. միջոց կամ ոչ կյուբ. ակտիվ չհանդիս.) իրաց-ից և դրամ. միջ-ից ընթ. ծախս-ի ֆինանս. համար համայնքի բյուջե ստաց. մուտք՝ տրամ. ներք. աղբյուր-ից		30 000,0	30 000,0	X	7 500,0	7 500,0	X	7 500,0	7 500,0	X	100,0	100,0
1380	3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1381 + տող 1382)	7442	207 728,0	X	207 728,0	117 728,0	X	117 728,0	44 763,7	X	44 763,7	38,0	

1381	Նվիր, ժառանգ. իրավ-ով ֆիզ. անձ. և կազմակերպ-ից համ-ին, վերջինիս ենթ. բյուջ. հիմն. տնօրին. անցած գույքի (հիմն. միջ. կամ ոչ նյութ. ակտ. չհանդ.) իրաց-ից և դրամ. միջ-ից կապ. ծախս. ֆին. համար համ. բյուջե ստ. մուտքեր՝ տրամ. արտաքին աղբյուր-ից	40 000,0	X	40 000,0	40 000,0	X	40 000,0	44 763,7	X	44 763,7	111,9	
1382	Նվիր, ժառանգ. իրավ-ով ֆիզ. անձ. և կազմակերպ-ից համ-ին, վերջինիս ենթ. բյուջ. հիմն. տնօրին. անցած գույքի (հիմն. միջ. կամ ոչ նյութ. ակտ. չհանդ.) իրաց-ից և դրամ. միջ-ից կապ. ծախս. ֆին. համար համ. բյուջե ստ. մուտքեր՝ տրամ. ներքին աղբյուր-ից	167 728,0	X	167 728,0	77 728,0	X	77 728,0	0,0	X	0,0	0,0	
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393)	500,0	500,0	0,0	123,0	123,0	0,0	353,0	353,0	0,0	287,0	287,0
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	500,0	500,0	0,0	123,0	123,0	0,0	353,0	353,0	0,0	287,0	287,0

Աշխատակազմի քարտուղար



Ներքին Շահնազարյան



Հաշվետվություն
Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ
 (02/01/21 - 31/03/21թ. ժամանակահատվածի համար)

Տարեկան ճշտված պլան										Առաջին եռամսյակի ճշտված պլան				Փաստացի				Ըստ տարածքային
			Ընդամենը		այլ թվում					Ընդամենը		այլ թվում		Ընդամենը		այլ թվում		
			(ս. 7+ ս8)	վարչական բյուջե	ֆունդային բյուջե	(ս. 10+ ս11)	վարչական բյուջե	ֆունդային բյուջե	(ս. 13+ ս14)	վարչական բյուջե	ֆունդային բյուջե							
NN	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14				
Տողի																		

[illegible]

[illegible]

[illegible]

2810	Հանգստի և սպորտի ծառայություններ	8	1	0	10 000,0	10 000,0	0,0	2 425,0	2 425,0	0,0	1 250,0	1 250,0	0,0	51,5
	որից՝													
2811	Հանգստի և սպորտի ծառայություններ	8	1	1	10 000,0	10 000,0	0,0	2 425,0	2 425,0	0,0	1 250,0	1 250,0	0,0	51,5
2820	Մշակութային ծառայություններ	8	2	0	430 269,7	259 556,2	170 713,5	236 775,5	66 062,0	170 713,5	97 696,4	34 605,9	63 090,6	52,4
	որից՝													
2821	Գրադարաններ	8	2	1	161 782,9	74 433,0	87 349,9	108 387,9	21 038,0	87 349,9	33 770,3	11 676,9	22 093,4	55,5
2822	Թանգարաններ և ցուցադրահներ	8	2	2	85 563,6	3 200,0	82 363,6	83 163,6	800,0	82 363,6	41 341,1	344,0	40 997,1	43,0
2823	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	8	2	3	107 535,0	107 535,0	0,0	26 134,0	26 134,0	0,0	16 326,9	16 326,9	0,0	62,5
2824	Այլ մշակութային կազմակերպություններ	8	2	4	75 388,2	74 388,2	1 000,0	19 090,0	18 090,0	1 000,0	6 258,2	6 258,2	0,0	34,6
2900	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	9	0	0	1 430 719,9	893 646,5	537 073,4	754 321,0	218 662,0	535 659,0	239 943,9	198 341,3	41 602,6	90,7
	որից՝													
2910	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն	9	1	0	984 891,8	556 234,4	428 657,4	563 301,0	136 058,0	427 243,0	161 455,7	119 853,0	41 602,6	88,1
	որից՝													
2911	Նախադպրոցական կրթություն	9	1	1	984 891,8	556 234,4	428 657,4	563 301,0	136 058,0	427 243,0	161 455,7	119 853,0	41 602,6	88,1
2950	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	9	5	0	440 828,1	332 412,1	108 416,0	189 770,0	81 354,0	108 416,0	78 257,2	78 257,2	0,0	96,2
	որից՝													
2951	Արտադպրոցական դաստիարակություն	9	5	1	440 828,1	332 412,1	108 416,0	189 770,0	81 354,0	108 416,0	78 257,2	78 257,2	0,0	96,2
2980	Կրթություն (այլ դասերի չպատկանող)	9	8	0	5 000,0	5 000,0	0,0	1 250,0	1 250,0	0,0	231,0	231,0	0,0	18,5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 34-Ա

19 ՄԱՅԻՄԻ 2021թ.

ՇՎԵՑՑԱՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ Քովիդ համավարակով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու համար հայտարարված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու և այդ նպատակով Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից համայնքներում տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհ ստանալու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ



ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 35-Ա
19 ՄԱՅԻՄԻ 2021թ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ ԵՐԿՈՒՄԻՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆԱԽԱԶԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հավանություն տալ ՄՆՏԶ ԼՎ ծրագրի բաղադրիչ երկուսին Կապան համայնքի մասնակցությանը և հաստատել նախաձեռնող խմբի կազմը՝

Գևորգ Փարսյան	համայնքի ղեկավար	նախագահ
Մարատ Հարությունյան	համայնքի ղեկավարի տեղակալ	նախագահի տեղակալ
Հասմիկ Ղոնյան	տնտ. զարգ. և արտ. կապերի բաժնի պետ	քարտուղար
Նելլի Միրզախանյան	տնտ. զարգ. և արտ. կապերի բաժնի առաջատար մասնագետ	
	հետադարձ կապի/բողոքների արձագանքման համակարգող	
Նելլի Շահնազարյան	համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար	
Իվետա Թադևոսյան	համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետ	
Նարեկ Դավթյան	համայնքի ավագանու անդամ	
Ժան Մովսիսյան	համայնքի ավագանու անդամ	
Արտավազդ Կարապետյան	«Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի տնօրեն	
Հայկ Սահակյան	Ագարակ և Խդրանց բնակավայրերի վարչական ղեկավար	
Աշոտ Սուքիասյան	Աղվանի բնակավայրի վարչական ղեկավար	
Գարիկ Աթայան	Աճանան բնակավայրի վարչական ղեկավար	
Անուշավան Հարությունյան	Արծվանիկ բնակավայրի վարչական ղեկավար	
Արտաշես Համբարձումյան	Օխտար բնակավայրի վարչական ղեկավար	
Ժիրայր Զախարյան	Գեղանուշ և Գոմարան բնակավայրերի վարչական ղեկավար	
Բենիամին Պողոսյան	Դավիթ Բեկ բնակավայրի վարչական ղեկավար	
Սամվել Սիմոնյան	Եղեգ բնակավայրի վարչական ղեկավար	
Արուսյակ Դավթյան	Եղվարդ բնակավայրի վարչական ղեկավար	
Սեյրան Զաքարյան	Ծավ և Շիշկերտ բնակավայրերի վարչական ղեկավար	
Արթուր Հովհաննիսյան	Կաղնուտ բնակավայրի վարչական ղեկավար	
Գևորգ Հարությունյան	Ձորաստան բնակավայրի վարչական ղեկավար	
Աշոտ Հովհաննիսյան	Ներքին Խոտանան և Առաջաձոր բնակավայրերի վարչական	
ղեկավար		
Խաչատուր Բաղդասարյան	Ներքին Հանդ բնակավայրի վարչական ղեկավար	

Ռոմիկ Ավանեսյան	Նորաշենիկ բնակավայրի վարչական ղեկավար
Նարե Հազարյան	Շիկահող բնակավայրի վարչական ղեկավար
Արման Դավթյան	Սևաքար և Չափնի բնակավայրերի վարչական ղեկավար
Արթուր Մանուչարյան	Սյունիք, Բարգուշատ, Դիցմայրի, Խորձոր և Սգնակ բնակավայրերի վարչական ղեկավար
Սամվել Առաքելյան	Վանեք բնակավայրի վարչական ղեկավար
Էրիկ Նուրիջանյան	Վարդավանք բնակավայրի վարչական ղեկավար
Կարեն Հակոբյան	Վերին Խոտանան և Շրվենանց բնակավայրերի վարչական ղեկավար
Բագրատ Հակոբյան	Տանձավեր բնակավայրի վարչական ղեկավար
Արաիկ Սարգսյան	Անտառաշատ բնակավայրի վարչական ղեկավար
Սասուն Սարգսյան	Ուծանիս բնակավայրի վարչական ղեկավար
Ղաիրաման Դավթյան	Տավրոս բնակավայրի վարչական ղեկավար
Հայկ Կարախանյան	Սյունիքի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
Հրանտ Արզումանյան	համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի անդամ
Անուշ Մեծլումյան	ՎՎ Կապանի ծրագրի համակարգող
Լաուրա Կարապետյան	ՎՎ Կապանի ծրագրի ավագ սոցիալական աշխատող
Լուսինե Սարուխանյան	համայնքի բնակիչ
Սուրեն Առաքելյան	«Չաարատ Կապան» ՓԲ ընկերության աշխատակից
Կատերինա Գաբրիելյան	համայնքի բնակիչ
Դավիթ Հայրապետյան	համայնքի բնակիչ
Արինե Ավանեսյան	համայնքի բնակիչ

2. Լիազորել նախաձեռնող խմբի անդամներին ծրագրի շրջանակներում իրականացնել ՄՆՏՁ ԼՎ ծրագրի բաղադրիչ երկուսով նախատեսված գործողություններ:

<i>(Signature)</i> Կողմ (9) <i>(Signature)</i> ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ <i>(Signature)</i> ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ <i>(Signature)</i> ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ <i>(Signature)</i> ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ <i>(Signature)</i> ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՐԱ Դեմ (0) Ձեռնպահ (0) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ	<i>(Signature)</i> ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ <i>(Signature)</i> ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ <i>(Signature)</i> ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ <i>(Signature)</i> ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ
--	---

2021թ. մայիսի 19
ք. Կապան

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 36-Ա

19 ՄԱՅԻՄԻ 2021թ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ ԵՐԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել ՄՆՏԶ ԼՎ ծրագրի բաղադրիչ երկուսի մասնակցության աշխատանքային խմբի կազմը՝

Մարատ Հարությունյան	համայնքի ղեկավարի տեղակալ
Նելլի Շահնազարյան	համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Իվետա Թադևոսյան	համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետ
Հասմիկ Ղոնյան	տնտ. զարգ. և արտ. կապերի բաժնի պետ քարտուղար
Նելլի Միրզախանյան	տնտ. զարգ. և արտ. կապերի բաժնի առաջատար

մասնագետ հետադարձ կապի/բողոքներին արձագանքման համակարգող

2. Աշխատանքային խմբին՝ սահմանված ժամկետում կազմել Սոցիալական Ներդրումների և Տարածքային Զարգացման ԼՖ Ծրագրին մասնակցության ծրագրային առաջարկը և ներկայացնել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամին:

Կողմ (9)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՍՈ

ԴԵՄ (0)

Զեռնապահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ



ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 37-Ա

19 ՄԱՅԻՍԻ 2021թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ
127-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

Կապան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Կապան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 127-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 25-րդ կետով հաստատված N 25 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի 8-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«Մասնագիտական՝ խմբավարներ 12,0 1080585»

2) Հավելվածի «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«Ընդամենը 18,5 1690784,5»:

Կողմ (9)՝

 ԱՄՐՅԱՆ ՎԱԶԵ

 ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

 ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

 ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ



ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ



ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ



ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 38-Ա

19 ՄԱՅԻՍԻ 2021թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-րդ կետով, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 4-րդ հոդվածի դրույթները, Կապան համայնքի ավագանին *որոշում է*

Սահմանել տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների իրականացման թույլատրելի վայրերը, պահանջներն ու պայմանները.

1. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունները թույլատրվում է իրականացնել Կապան քաղաքի և գյուղական բնակավայրերի հրապարակներում, մարզադաշտերում և քաղաքային զբոսավայրերում.

2. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունները իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան, ապահովելով կատարողների /օգտագործողների/ համապատասխան որակավորման, գիտելիքների և հմտությունների պահանջը և /կամ/ տեխնիկական սարքավորումների պայմանները:

Կողմ (9)

ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 39-Ա

19 ՄԱՅԻՍԻ 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Կապան համայնքի և Արմինե Հայրապետյանի միջև 2012 թվականի օգոստոսի 17-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի (հասցեն՝ ք. Կապան, Մ. Պապյան փողոց 19/2, մակերեսը՝ 0.0072 հա, կադաստրային ծածկագիրը՝ 09-001-0407-0014) կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրից (Կապան համայնքի ղեկավարի 03 սեպտեմբերի 2020թ. թիվ 1231-Ա որոշմամբ լուծված) ծագած և չկատարված պարտավորությունը (ընդհանուր՝ 1253183 /մեկ միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար մեկ հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամ, որից մայր գումար՝ 481139 /չորս հարյուր ութսունմեկ հազար մեկ հարյուր երեսունինը/ ՀՀ դրամ և տույժ՝ 772044 /յոթ հարյուր յոթանասուներկու հազար քառասուն չորս/ ՀՀ դրամ) ներել և այն համարել դադարած:

2. ՀՀ Կապան համայնքի և «ԳԵՎԼԵՌ» ՍՊ ընկերության միջև 2018 թվականի հունիսի 12-ին կնքված՝ համայնքային սեփականություններ համարվող, թիվ Գ-51 պայմանագրով՝ ք. Կապան, Դավիթ Բեկ թաղամաս 8/8 հասցեի դերիվացիոն ջրանցքի՝ մակերեսը 250 քմ, թիվ Գ-50 պայմանագրով՝ ք. Կապան Լեն Հանքեր թաղամաս 23/5 հասցեի դերիվացիոն ջրանցքի՝ մակերեսը 250 քմ, թիվ Գ-52 պայմանագրով՝ ք. Կապան Լեն Հանքեր թաղամաս 22 հասցեի շինությունների՝ մակերեսը 250 քմ, ծագած և չկատարված պարտավորությունները (ընդամենը տույժ՝ 104626 /մեկ հարյուր չորս հազար վեց հարյուր քսանվեց/ ՀՀ դրամ) ներել:

3. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել սույն որոշման կատարումը:

Կողմ (9)

ԱՍՐՅԱՆ ՎԱՋԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐՈ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 40-Ա

19 ՄԱՅԻՄԻ 2021թ.

ԱՐՇԱԿ ԳԱԳԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 822 որոշման և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Կապան քաղաքի Ա.Մանուկյան փողոցի 3/1 հասցեի բնակիչ Արշակ Գագիկի Բաղդասարյանին /անձնագիր՝ AN0513064, ՀԾՀ՝ 3810960071/ տրամադրել գույքահարկի արտոնություն՝ ազատելով Կապան համայնքում հաշվառված MERCEDES BENZ C280 մակնիշի 35 QU 986 պետհամարանիշի փոխադրամիջոցի համար 19.05.2021թ. դրությամբ հաշվարկված գույքահարկի գծով պարտավորություններից՝ 174 444 /մեկ հարյուր յոթանասունչորս հազար չորս հարյուր քառասունչորս/ դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումից բխող գործառնություններն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ(9)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 41-Ա

19 ՄԱՅԻՍԻ 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԺԴԵՀԻ ՀՐԱՊԱՐԱԿ, ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 46-րդ, 48¹-րդ, 76-րդ, 81-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի և քաղաքացի Գագիկ Համլետի Խաչատրյանի միջև 2019 թվականի մայիսի 29-ին կնքված՝ քաղաք Կապան, Գ.Նժդեհի հրապարակ, թիվ 1/3 հասցեում գտնվող 0,00053 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «ընդհանուր օգտագործման հողեր» գործառնական նշանակության հողամասը (կադաստրային ծածկագիրը՝ 09-001-1460-0003) կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել 2 (երկու) տարով՝ մինչև 2023 թվականի մայիսի 29-ը:

2. Գագիկ Խաչատրյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2019 թվականի մայիսի 29-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ:

3. Սահմանել, որ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրի կնքման և դրանից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են կառուցապատման իրավունք ունեցող անձի միջոցների հաշվին:

4. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել սույն որոշման կատարումը:

Կողմ (9)

ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐՈ

ԴԵՄ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

թ. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 42-Ա

19 ՄԱՅԻՍԻ 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԺԴԵՀԻ ՀՐԱՊԱՐԱԿ, ԹԻՎ 1/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 46-րդ, 48¹-րդ, 76-րդ, 81-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի և քաղաքացի Լիզա Հարությունի Գալստյանի միջև 2019 թվականի մայիսի 29-ին կնքված՝ քաղաք Կապան, Գ.Նժդեհի հրապարակ, թիվ 1/4 հասցեում գտնվող 0,00088 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «ընդհանուր օգտագործման հողեր» գործառնական նշանակության հողամասը (կադաստրային ծածկագիրը՝ 09-001-1476-0002) կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել 2 (երկու) տարով՝ մինչև 2023 թվականի մայիսի 29-ը:

2. Լիզա Գալստյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2019 թվականի մայիսի 29-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ:

3. Սահմանել, որ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրի կնքման և դրանից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են կառուցապատման իրավունք ունեցող անձի միջոցների հաշվին:

4. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել սույն որոշման կատարումը:

Կողմ (9)

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

ԴԷՄ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2021թ. մայիսի 19

ք. Կապան

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 43-Ա

19 ՄԱՅԻՄԻ 2021թ.

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
17-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Դավիթ Բեկ, Կաղնուտ, Ճակատեն, Եղվարդ և Սզնակ բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու և անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվություն) Հայաստանի Հանրապետությանը հողամասեր օտարելու մասին» թիվ 30-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

1) Որոշման 2-րդ կետից հանել «5» թիվը:

2. Կապան համայնքի ղեկավար Գ.Փարսյանին՝ սույն որոշումից բխող գործառնություններն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (9)

ԱՄՐՅԱՆ ՎԱՉԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 44-Ա

19 ՄԱՅԻՍԻ 2021թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՇԻԿԱՀՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 63-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 6-ի N 72 դրական եզրակացությունը և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում գտնվող Շիկահող բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,2759 հա վարելահողը (կադաստրային ծածկագիր՝ 09-072-0107-0082) և գյուղատնտեսական նշանակության 0,32879 հա վարելահողը (կադաստրային ծածկագիր՝ 09-072-0107-0084) փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա:

2. Սույն որոշման 1-ին կետով հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրված հողամասը, պաշտպանական նպատակներով օգտագործելու համար, անհատույց սեփականության իրավունքով (սվիրատվություն) օտարել Հայաստանի Հանրապետությանը:

3. Սույն որոշման 1-ին կետով սահմանված հողամասերը նպատակային նշանակությամբ չօգտագործելու դեպքում անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվություն) հետ վերադարձնել համայնքին:

4. Կապան համայնքի ղեկավար Գ. Փարսյանին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ (9)՝

 ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

 ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

 ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

 ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

 ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ

 ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ



ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան

Հավելված
Կապան համայնքի ավագանու
19.05.2021թ. թիվ « 44 » որոշման



Հիկաեռ
ԱՄԽՈՒԿՈՂՈՂ

1 Գյուղատնտեսական նշանակության 0.2759 հա
վարելահող 09-072-0107-0082 007

2 Գյուղատնտեսական նշանադրւթյան 0.32879
ID4
հա վարելահող 09-072-0107-0084 076

Հ/Հ	Կոորդինատներ		Գծային չափեր
	X	Y	
1	X=8628335,8000	Y=4329553,3384	51,9
2	X=8628375,3706	Y=4329586,9249	28,31
3	X=8628373,1636	Y=4329615,1523	27,87
4	X=8628358,2604	Y=4329638,7097	41,05
5	X=8628320,1249	Y=4329653,9090	79,61
6	X=8628272,4771	Y=4329590,1300	29,19
7	X=8628317,1568	Y=4329568,7257	20,35
8	X=8628335,8000	Y=4329553,3384	24,17



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 45-Ա

19 ՄԱՅԻՍԻ 2021թ.

**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԱՃԱՆԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 74 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Կապան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 134-Ա, 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 16-Ա որոշումների, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ և 67-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի N 723-Ն, 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշումների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնք, գյուղ Աճանան, 2-րդ փողոց, թիվ 74 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.079742 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության հողամասը (կադաստրային ծածկագիր 09-042-0004-0001) աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գինը՝ 268 420 ՀՀ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի աճուրդի կազմակերպումը և իրականացումը:

Կողմ (9)

ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

ԴԵՄ (0)

Ձեռնպահ (0)
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ


ՄԿՐՏՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳՆՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 46-Ա

19 ՄԱՅԻՄԻ 2021թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ԵՂԵԳ ԳՅՈՒՂՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ,
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 46-րդ և 76-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286, Կապան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի թիվ 8-Ն որոշումների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Կապան համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, Եղեգ գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության ներքոհիշյալ հողամասերը գյուղատնտեսությամբ զբաղվելու նպատակով, 5 /հինգ/ տարի ժամկետով մրցույթով վարձակալությամբ օգտագործման տրամադրել, սահմանելով՝

1) 3 հա /կադաստրային ծածկագիր՝ 09-033-0114-0020/ 3-րդ կարգի անջրդի վարելահողի համար 15000 (տասնհինգ հազար) դրամ մեկնարկային տարեկան վարձավճար,

2) 2հա /կադաստրային ծածկագիր՝ 09-033-0114-0021/ 3-րդ կարգի անջրդի վարելահողի համար 10000 (տաս հազար) դրամ մեկնարկային տարեկան վարձավճար,

3) 1.5 հա /կադաստրային ծածկագիր՝ 09-033-0114-0019/ 3-րդ կարգի անջրդի վարելահողի համար 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ մեկնարկային տարեկան վարձավճար

2. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի կազմակերպումը և իրականացումը:

Կողմ (9)

ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

ԴԵՄ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 47-Ա

19 ՄԱՅԻՍԻ 2021թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՃԱՆԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՅՈՒՅԹՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 46-րդ և 76-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշուման և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Կապան համայնքի վարչական տարածքում, Աճանան գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.09359 հա / կադաստրային ծածկագիր՝ 09-042-0104-0021/ 3-րդ կարգի անջրդի վարելահողը՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու նպատակով, 5 /հինգ/ տարի ժամկետով մրցույթով վարձակալությամբ օգտագործման տրամադրել, սահմանելով՝ 5000 (հինգ հազար) դրամ մեկնարկային տարեկան վարձավճար:

2. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի կազմակերպումը և իրականացումը:

Կողմ (9)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 48-Ա
19 ՄԱՅԻՄԻ 2021թ.

**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ»
ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» թիվ 186-Ն հրամանի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին *որոշում է*.

1. Կապան համայնքի վարչական սահմաններում գտնվող, որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված ներքոհիշյալ հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն.

1) Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի 3-րդ նրբանցքում 09-001-0532-0007 կադաստրային ծածկագրով 0.07101 հա հողամասը.

2) Կապան քաղաքի Աշոտավան թաղամասում գտնվող 09-001-0250-0009 կադաստրային ծածկագրով 0.05121 հա հողամասը և 09-001-0250-0011 կադաստրային ծածկագրից 0"00668 հա հողամասը.

3) Կապան քաղաքի Լեոնագործների փողոցի 4-րդ նրբանցքում գտնվող 09-001-0394-0012 կադաստրային ծածկագրից 0.13680 հա հողամասը.

4) Կապան քաղաքի Աշոտավան թաղամասում 09-001-0249-0033 կադաստրային ծածկագրից 0.11590 հա հողամասը.

5) Կապան քաղաքի Աշոտավան թաղամասում 09-001-0249-0031 կադաստրային ծածկագրից 0.04847 հա հողամասը և 09-001-0249-0032 կադաստրային ծածկագրից 0.0459 հա հողամասը.

6) Կապան քաղաքի Վաչագան թաղամասում 09-001-0626-0003 կադաստրային ծածկագրով 0"15208 հա հողամասը.

7) Կապան քաղաքի Համայնական թաղամասում 09-001-0042-0007 կադաստրային ծածկագրով 0"10037 հա հողամաս և 09-001-0042-0008 կադաստրային ծածկագրից 0"04273 հա հողամասը.

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառնություններն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով

Կողմ (9)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱՀԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

Դեմ (0)

Ձեռագրի (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 49-Ա

19 ՄԱՅԻՍԻ 2021թ.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂԱԲՈՒՐՋ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 46-րդ և 76-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշումանալ և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Կապան համայնքի վարչական տարածքում, Բաղաբուրջ թաղամասում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.01684 հա / կադաստրային ծածկագիր՝ 09-001-0711-0042/ 4-րդ կարգի անջրդի վարելահողը՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու նպատակով, 10 /տաս/ տարի ժամկետով մրցույթով վարձակալությամբ օգտագործման տրամադրել, սահմանելով՝ 1000 (հազար) դրամ մեկնարկային տարեկան վարձավճար:

2. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի կազմակերպումը և իրականացումը:

Կողմ (9)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

ԴԵՄ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. մայիսի 19

ք. Կապան



